




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2169

ԲՅՈՒԴՅՈՆՆՈՒ ԱՐՇԱԿԻ ԵՏԱՐ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՋԻԱԲՈՒԾԻՆ



636.1

Խ-84

Ա Յ

1932

ՅԵՐԵՎԱՆ

ԲՅՈՒԴՅՈՆՆՈՒ ԱՐՇԱԿԻ ՇՏԱԲ 24 SEP 2010

636.1

14-84

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԶԻԱԲՈՒԾԻՆ

18553

ԳՅՈՒՂԱՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

8 Ա Ն Կ

ԼՂ.

1. Խորհուրդներ ձևաբուծին	3
2. Համ. Կ (ը.) Կ. կենտկոմի վորոշումը	21
3. ԽՍՀՄ կենտգործկոմի վորոշումը	22
4. ԽՍՀՄ կոլտնտկենտրոնի վորոշումը	28
5. Կանոնադրություն ձևաբուծական ֆերմաներում աշխատանքի կազմակերպման մասին	31
6. Հայաստանի կոլտնտկենտրոնի հրահանգը	41

Պետերատի տպարան

Գլավիտ 8920 (բ)

Պատվեր № 2878

Հրատ. № 5

Տպում 1500



37985-62

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՁԻԱԲՈՒԾԻՆ

Մեր Ժողովրդական տնտեսության բազմաթիվ ձևերում, ինչպես և յերկրի պաշտպանության ամրացման գործում ձին խոշոր դեր է կատարում. դա պարզ է բոլորիս: Ուստի մեր կոլտնտեսությունները, խորհրդային տնտեսություններն ու աշխատավոր մենատնտեսները շատ մեծ ուղադրություն պետք է դարձնեն ձիերի քանակի ավելացման ու նրանց վորակի բարձրացման վրա:

Տնտեսության մեջ ձիերի քանակն ավելացնելու յերկու միջոց կա. կամ պետք է հասունացած ձիեր գնել և կամ պետք է աճեցնել, բազմացնել ունեցած ձիերը:

Բազմացնելու միջոցով ձիերի քանակն ավելացնելն ամենից ձեռնառու ձևն է, վորովհետև այն ավելի էժան է նստում տնտեսությունը, քանի վոր փոքրուց ինքն է պահում և խնամում ձին, լավ խմանում է նրա հատկությունները, բնավորությունն ու ընդունակությունները և ըստ այնմ էլ նրան ոգտագործում է համապատասխան նպատակների:

Սակայն հաճախ պատահում է, վոր տնտեսությունը ձի չի ունենում, վոր բազմացնի, կամ յեղածը քիչ է լինում, աշխատանքները յերեսի վրա յեն մնում, անհրաժեշտ է լինում հասունացած բանուկ ձի գնել:

Առանձնապես մեր կոլտնտեսությունները, վորոնց տնտեսությունը տարեց տարի զարգանում և խոշորանում է, ցանքերի տարածությունն ընդարձակվում, շատ անգամ գնում են հասունացած ձիեր, վորպեսզի տրակտորի հետ միասին ոգտագործեն վորպես քաշող ուժ, բեռնակիր, հեծնելու համար և այլն:

Այդպիսի դեպքերում ամենից նպատակահարմարն է ձին գնել պետական հիմնարկություններից ու կազմակերպություններից: Պարզ է թի ինչու. — պետական կազմակերպությունները սպեկուլյատիվ նպատակներ չունին, նրանք գնորդին չեն խարի և խտտնված ձին լավի տեղը չեն սաղացնի, ցեղականը կվաճառեն

3307

վորպես ցեղական, հասարակը՝ հասարակ և ալլն, յուրաքանչյուրն իրեն համապատասխան գնով:

Սակայն քիչ չի պատահում, վոր մեր կոլտնտեսութունները և աշխատավոր մեծատնտեսները ստիպված են լինում իրենց անհրաժեշտ ձին գնել մասնավոր շուկայից, վորովհետև պետական կազմակերպութունները լեղած հսկայական պահանջը միանգամից բավարարել չեն կարողանում, կամ գնորդից հետո չեն լինում և ալլն:

Ահա, առանձնապես այս դեպքերում ե, վոր մեր կոլտնտեսութունները և աշխատավոր գյուղացիները շատ զգուշ պիտի լինեն, վոր անպետք, ծուլ ու արատավոր ձին չգնեն լավի տեղ և պատուհասի մեջ ընկնեն, վորովհետև վատ ձին իսկապես պատուհաս և դառնում տիրոջ գլխին և իր կերածի չափ ել չի աշխատում:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԸՆՏՐԵԼ ՁԻՆ

Յերբ, կոլտնտեսութունն ուղում ե ձի գնել, պետք ե այդ գործին ուղարկել իր աչն անդամին, վորը լերկար ժամանակ ձիու հետ գործ ե ունեցել, ճանաչում ե լավն ու վատը, ուրիշ խոսքով ասած, ձիուց բան և հասկանում: Կարելի չե նույնիսկ տնտեսաբուժ կամ անասնաբուժակ տանել հետը, վորպեսզի նա մանրամասն գնի ձին. այդպիսով միայն վստահ կարելի չե լինել, վոր ձին լավն ե, հիվանդ չե:

Յերբ մենատնտես գյուղացին և ուղում ձի գնել, բայց ինքը ձիուց քիչ բան և հասկանում, նա պետք ե իր հետ տանի ձի ճանաչող վստահելի ու հավատարիմ մարդ, վոր նա ընտրի ձին:

Ձին ընտրելիս ամենից առաջ հեռվից մի ընդհանուր հայացք պիտի դնել նրա վրա և տեսնել նրա մեծութունը, զիրուքունը, կանգնելու դիրքը, մի խոսքով ստանալ ընդհանուր տպավորութուն:

Յեթե այդ առաջին տպավորութունը բավարար ե, այսինքն՝ ձին գնելու համար հարմար ե, պետք ե մոտենալ և ատամներից վորոշել նրա տարիքը:

Յեթե ձիու առաջին, ստորին ատամների մեջ կան կաթնատամներ, կամ կաթնատամներ չկան, բայց մնացած ատամների լերբորդ գույքը նոր ե միայն դուրս գալիս, դա նշանակում ե ձին հինգ տարեկանից փոքր ե:


Յեթե առաջին ստորին ատամների մեջ դեռևս փոսիկներ

կան, նշանակում ե ձին 7 տարեկանից ավելի չե. (տես նկար № 1.):



Նկ. 14 1/2, 6 և 7 տարեկան ձիու ներքին ծնոտը

Յեթե ստորին ատամների ըտրոր փոսիկներն արդեն մաշվել են, բայց վերին առաջին ատամների մեջ դեռ փոսիկներ կան, նշանակում ե ձին ութից տասն տարեկան ե (տես նկար № 2):



Նկ. 2. 8 և 9 տարեկան ձիու վերին ծնոտը

Յեթե ձիու վոչ վերին և վոչ ստորին ատամներում փոսիկներ չկան, նշանակում ե ձին տասնմեկ տարեկան ե, կամ ավելի մեծ:

Յեթե նյութական միջոցները թույլ են տալիս, ի հարկե, ավելի լավ ե ջահել ձի գնել, վորովհետև ջահել ձին ավելի դիմացկուն ե լինում և չերկար ժամանակ ե աշխատում:

Վորպեսզի իմանաս՝ ձին տեսնում ե, թե վոչ, վարվիր հետևյալ կերպ. խնդրիր վորեև մեկին, վոր ձեռքով ձիու մի աչքը ծածկի, իսկ ինքդ կանգնիր բաց աչքի դիմաց, մի 5 քայլ հեռու և մտրակդ ողում կամաց շարժիր: Յեթե ձին այդ շարժումից

վզուշտանում է, նշանակում է տեսնում է: Հետո նույն ձևով փորձիր նաև մյուս աչքը:

Յեթե ձիու քթից թարախ է հոսում և ծնոտների տակ ուռուցքներ կան, առանց անասնաբուժին հարցնելու և ցույց տալու այդպիսի ձին չգնեք, դա կարող է խախտ սոսկալի հիվանդութունը լինել, վորով վարակվելու դեպքում թե ձին կատկի և թե մարդը կմեռնի:


Ավելի լավ է գնել թեկուզ փոքրիկ, բայց կրթիկ, ամրակազմ, լայնակուրծք ու ամուր վոտքերով ձի:

Ձի ընտրելիս չմոռանաս ամենազլխավորը—ընտրիր լայնակուրծք ու շիտակ, առանց արատների վոտքերով ձին:


Լավ կուրծք ունեցող ձիու կրծքի չափը—մնգավի վերևից մինչև կրծքի ներքին ծայրը համարյա թե կարող է հավասար լինել առաջին վոտի յերկարությանը՝ սկսած արմուկից մինչև նրա ծայրը: Միայն մեծածավալ կուրծք ունենալու դեպքում ձին կարող է առողջ թոքեր ու սիրտ ունենալ:

Իսկ այդ անհրաժեշտ է և՛ ծանր աշխատանք կատարելու և՛ արագ վազելու համար:

Վոտքերի վրա չպետք է լինի վորևե ուռուծք, խիլ: (Տես նկար. 4):



Նկ. 3. Ձիու մարմնի մասերը: Յերկու ուղահայաց քձերով ձիու իրանը բաժանված է յերեք մասերի.—առաջին (ուսային), միջին (թիկունքային) և հետին (կոնքային):




Նկ. 4. Ձիու զլխավոր պահասություններն ու հիվանդությունները

Առաջին վոտքի արմուկից մինչև ծնոտը, իսկ չետևի վոտքի ազդրը (բուզը) պետք է լավ պատած լինի մկաններով (տես նկ. 3-ում 19 և 37 թվերի ցույց տված տեղը): Դա նշան է, վոր ձին ուժեղ է:

Վորքան յերկար է թեվի տակը դաստակի համեմատությամբ (տես № 3 նկարում 19 և 21 թվերի ցույց տված տեղը), այնքան ձին արագաքայլ է: Ձին արագաքայլ է նաև այն դեպքում, լեթենրա թիակը յերկար է և թեք (տես նկ. № 5):

Ձիու վոտքերի վրա շատ արատներ ու հիվանդություններ է լինում: Այստեղ հնարավոր չե՛ այդ ամենը նկարագրել, սակայն նրանց մեծ մասը կարելի է հեշտությամբ նկատել: Հիվանդ վոտքերով ձին հանգիստ կանգնած ժամանակ վեր է քաշում մեկ մի վոտը, մեկ մյուսը, իսկ վազելիս կաղում է:

Ձիու վոտքերի գրությունն ավելի լավ պարզելու համար պետք է նրա պոչը կշկոնի և ասել, վոր մի բաց ու հարթ տեղ կշկոնի և ասել, վոր մի բաց ու հարթ տեղ կշկոնի հանդարտ քայլերով, ապա ազատ ու



Նկ. 5. Վերևում—կարճ և պերկ թիակ, ներքևում—յերկար ու թեք թիակ

հանդիստ վաղըրով: Այդպիսով կարելի յն տեսնել և կաղուխունը և լետեի ու առաջի վոտքերն իրար խփելը և նույն գույզի վոտքերն իրար խփելը: Յեթն վաղըրից հետո ձիու կողերը տրորվում են և կողերից ցած առաջանում և ակոս, նշանակում և ձին սրտախտ ունի, ուստի և այդ ակոսը կոչվում է «սրտախտի ակոս»:

Վերջնականապես ձին պիտի վարձել լծելով: Այդ ձևով կարելի յն պարզել, թե ձին հեշտությամբ և լծվում, խրատող չի, ծուլ չի: Յերբ փորձելու համար ձին լծել ես, մի քանի պտույտ գործիր զանազան ուղղութիւններով և մի քանի անգամ կանգնեցրու, վորպեսզի համոզվես, ձին յենթարկվում և քշողին թե վոչ: Հետո խնդրիր, վոր բացի քեզանից մի 2—3 հոգի ել նստեն և նույն փորձերը կրկնիր այդ ծանրութիւնով:

Շատ հաճախ չարչի—սպեկուլյանտները ձի վաճառելիս զանազան խարդախ միջոցներով յեն դիմում, վոր գնորդին խաբեն: Պետք է շատ զգուշ լինել:

Բերենք այստեղ այդ չարչիների խարդախութիւններից մի քանիսը:

ա) Նիհար, վտիտ ձին շուկա հանելուց մի քանի որ առաջ սկսում են կեբակել և մեծածավալ կերով, վորպեսզի ստամոքսը ուռչի և ձին տուռ լերհա: Այդ պարզելու համար պետք է ուշադրութիւն դարձնել հետևյալին: Եթե ձիու ստամոքսի ներսը զուլում և և պոչն ել ապականված, կեղտոտված և, նշանակում է ստամոքսի կլորութիւնը կեղծ և, ձին նիհար և:

բ) Պառաված և բոլոր ատամների փոսիկները մաշված ձին ջահելի տեղ ծախելու համար, շիկացած լերկաթով նրա ատամները դաղում և փոսիկներ են շինում: Այդ կեղծիքը պարզելու համար պետք է իմանալ, վոր ջահել ձիու ատամների փոսիկները ներսից պատած են լինում կլաշելի նման մի տեսակ ճեմալով, վորն իր գունով խիստ աչքի չեն ընկնում (տես նկ. № 1): Կեղծ փոսիկներում այդ ճեմալը չի լինում:

գ) Պառավ ձիու գլխի սպիտակ մազերը ներկում են: Յեթն թաշկինակը քսես մազերին և թաշկինակը ներկաովի, նշանակում է ձիու մազերը ներկված են:

դ) Սմբակի ճաքը լցնում են կպրածությով կամ ցեխով: Գնելուց առաջ սմբակները մաքրիր և ուշադիր նայիր, ճաքը կտեսնես, յեթե կա:

ՅԵՂԱԿԱՆ ԶԻՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ ձին ընտրում ես սերունդ ստանալու, բաղմացնելու նպատակով, բացի վերոհիշյալներից ուշադրութիւն դարձրու նաև հետևյալի վրա:

ա) Չամբիկը պետք է ունենա լաչն հետույք և իր տեսքով չպիտի նմանվի հովատակին կամ ամորձատած (կբտած) ձիուն:

բ) Ինչպես ցեղական զամբիկ, այնպես ել ցեղական հովատակ ընտրելիս առանձնապես խուսափիր այն արատներից, վորոնք ժառանգաբար անցնում են նրանց սերնդին: Ժառանգաբար անցնում են թամբից, կախ ընկած մեջք ունենալու հատկութիւնը, (տես նկ. № 6), կախ ընկած գավակը, տափակ կողը, նեղ կուրծք, հափից ավելի յերկար վոտքեր ունենալու հատկութիւնները: Խուսափիր նաև այնպիսի հովատակից կամ զամբիկից, վորը վատ բնավորութիւն ունի—չար ե, խրատող, ծուլ և ավել:



Նկ. 6. Լավ թիկունք, բարձր գավակ


դ) Հիվանդութիւններից ժառանգաբար անցնում են մանավանդ վոսկրի հիվանդութիւնները ինչպես և վոտքերի (տես նկար № 4) ու աչքի մի քանի հիվանդութիւններ. որինակ՝ լուռնի կուրութիւն:

դ) Բուռնաբու զամբիկը մեծ արգանդ ունենա, իսկ կուրծն ու ծծերը պետք է լավ դարգացած լինեն:

լե) Ամենից լավ և վերցնել այնպիսի զամբիկ, վորը հայտնի չն վորպես լավ քառակ տվող: Իսկ ել ավելի լավ և գնել այնպիսի զամբիկ վորը հոր նման քուսակներ և տալիս: Այդպիսի զամբիկը կարելի յն բեղմնավորել ամենալավ հովատակով և ստանալ լավագույն ցեղի քուսակ:

ԲԵՆԴԱՆԱԿԱՆՈՐՈՒՄԸ

Ձին—զամբիկը բեղմնավորելու համար պետք է տանել պետական հովատակի մոտ: Յեթե մոտակայքում պետական բեղմնավայան չկա, կարելի չի տանել տեղական հովատակի մոտ, բայց անպայման իր լավ հատկություններով հալտերի և ճանաչված հովատակի մոտ:



Նկ. 7. Որդւյան հովատակ (սիսակ)

Վոչ ցեղական, ինչպես և կես արագավազ և լրիվ արագավազ զամբիկին և հովատակին բեղմնավորվել և բեղմնավորել կարելի չի թողնել չորս տարեկան հասակից սկսած: Ծանրաքարշ տեսակի զամբիկներին և հովատակներին, լեթե նրանք հյուծված չեն, այլ լավ զարգացած են, կարելի չի բեղմնավորման թողնել յերեք տարեկան հասակից: Բեղմնավորումը նոր սկսող ջահել հովատակին առաջին տարին կարելի չի տալ սեղոնում 20 զամբիկից վոչ ավելի:

Չամբիկի բեղմնավորվելու ցանկություն ունենալը յերեւում է հետեւյալ նշաններեց. հաճախ պոչը բարձրացնում է, կարծես միզելիս լինի: Հեշտոցից հոսում է թափանցիկ կաշույն լորձույնը, ուրիշ ձի տեսակիս խրխնջում է: Չամբիկի ցանկությունն ավելի ճիշտ կարելի չի իմանալ նրա մոտ փորձի համար հովատակ բերելով:

Չամբիկի ցանկության շրջանը տևում է սովորաբար յերեքից չորս օր, յերեմին ել մինչև 9 օր: Լավ է զուգավորում կատարել հենց ցանկության սկզբի օրերին:

Չուգավորումը պետք է կատարել վաղ առավոտյան և յերեկոյան հով ժամերին: Այն զամբիկը, վոր ցանկության է գալիս, ծածկվում է յերկրորդ օրը (հաշվելով առաջին օրը ցանկության սկզբից): Հետո նույն զամբիկին փորձում են 5-րդ օրը, հաշվելով ցանկության գալու առաջին օրից: Ցանկության դեպքում զամբիկը նույն օրը ծածկվում, զուգավորվում է: Հետագա ստուգումը կատարվում է 15-րդ օրը, ելի հաշվելով ցանկության առաջին օրից: Որինակ՝ զամբիկը ցանկության է լեկել ապրիլի 26-ին, ծածկվում է 27-ին: Առաջին ստուգումը կատարվում է ապրիլի 30-ին և վերջինը՝ մայիսի 10-ին, այսինքն՝ 15-րդ օրը, սկսած ապրիլի 26-ից, ցանկության առաջին օրից:

Չուգավորումից առողջ զամբիկի պոչը արմատից սկսած 25 սանտիմետր փաթաթվում է կոշտ բինտով, վորպեսզի զուգավորելու ժամանակ պոչի մագերով չվերափորի հովատակի սեռական անդամը: Յեթե զամբիկը իր հասակով շատ է ցած հովատակից, նրան պետք է կանգնեցնել բարձր տեղ, լեթե բարձր է, պետի կանգնեցնել ցածր տեղ:

Սկզբում զամբիկն ու հովատակը իրար պիտի մոտեցնել գունչ—գնչի: Յեթե զամբիկը ազատ իր մոտ է թողնում հովատակին, թույլ է տալիս վոր իրեն հոստի, պոչը բարձրացնում է և հեշտոցից թափանցիկ լորձույնը է հոսում, նշանակում է նուգում է զուգավորվել: Այդ դեպքում զամբիկը պետք է շուտ տալ, գավակը դարձնել հովատակի կողմը և զուգավորել: Յեթե նա հովատակին խփում է, պետք է շուտ հեռացնել իրարից:

Վորպեսզի զամբիկը հովատակին վնասել չկարողանա, զուգավորելուց առաջ նրան պիտի հազցնել խամուտ, կողափոկերով և ոգտագործել այնպես, ինչպես ցույց է տված նկար Ձ 8-ում:

Չուգավորումն ավարտելուց հետո կենդանիներին պիտի մանածել մինչև հանգստանան և ազա ուղարկել իրենց տեղերը:

Չուգավորված զամբիկը 9-րդ օրը նորից հովատակի մոտ բերելու կարիք չկա, ինչպես անում են հաճախ: Այդ ժամանակ նախորդ ցանկությունը համարյա անցած է լինում, իսկ յերկրորդ ցանկությունը դեռ սկսված չի լինում:

Մեր պայմաններում զուգավորելու, բեղմնավորելու ամենալավ ժամանակը ապրիլ, մայիս ամիսներն են: Այդ դեպքում ծնունդը վրա յե հասնում մաքուր—ապրիլ ամիսներին:



Նկ. 8. Սովորական խամուտ, վոր հագցնում են զարկներին զուգավորման ժամանակ

ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Հովառակը զամբիկին բեղմնավորելիս շատ սերմ ե թափում, յերբեմն մի բաժակից ավելի: Մինչդեռ քիչ սերմով ել զամբիկը կարող ե բեղնավորվել: Յեվ ահա, մարդիկ սովորել են հովառակի սերմը հափաքել, բաժանել 10—15 մասի՝ և հատուկ սրակիչի միջոցով սրակել ցանկության յեկած 10—15 զամբիկի:

Արհեստական բեղմնավորման ոգուտները հետևյալն են.

ա) Հզի զամբիկների թուկոսը լինում ե ավելի, քան սովորական բեղմնավորումից:

բ) Սերունդը լինում ե առողջ, դիմացկուն և վոչնչով չի ապրբերվում այն սերնդից, վոր ստացվել ե բնական բեղմնավորման միջոցով:

գ) Այս ձևով մի հովառակից ավելի շատ քուռակ կարելի յե ստանալ, քան սովորական բեղմնավորման միջոցով:

դ) Այս ձևով հաճախ սկսում են քուռակ առլ նաե այն զամբիկները, վորոնք բնական բեղմնավորման ձևով յերբեք քուռակ չեն տվել:

յե) Արհեստական բեղմնավորման կայաններում սովորաբար պահվում են պետական գոմերից վերցրած ամենալավ հովառակները:

ԾԱՆՐԱԾ ԶԱՄԲԻԿԻ ԽՆԱՄՔԸ

Զամբիկի հղիության շրջանը տևում ե միջին հաշվով 11 ամիս: Յերբեմն գրանից մի քիչ ավելի յե մնում, յերբեմն շուտ ե ծնում: Շատ քիչ դեպքերում ծնում են 12 ամսից հետո:

Մանրած (հզի) զամբիկին առաջին 8 ամիսը աշխատեցնել միանգամայն հնարավոր ե: Միայն հարկավոր ե զգուշանալ, վոր հզի զամբիկը չափից ավելի ուժ չգործադրի և կարուկ շարժումներ չանի:

Վերջին 3 ամսում ծանրած զամբիկի հետ պիտի վարվել աշնպես, ինչպես հիվանդի հետ են վարվում: Պետք ե զգուշ և խնամքով պահել, սակայն ելի տնային թեթև աշխատանքներում ոգտադործել կարելի յե: Յեթե աշխատանք չկա, պետք ե զոնե մի ժամ ման տծել. շարժումները լավ են ազդում ծանրած զամբիկի վրա և բացում են նրա ետորժակը:

Ուշ աշնան ծանրացած զամբիկին չի կարելի առավոտվա ցրտին թողնել առածելու. դրանից նա կարող ե պաղել և վիժել: Մանրած զամբիկի կերը պետք ե թարմ լինի: Փչացած կերը հաճախ վրժման պատճառ ե դառնում:

Վերջին ամսին զամբիկի փորը խիստ կախվում ե և «քաղցի յոտակներն» ընկնում են: Զրեւուց հետո պարզ լերևում ե, թե ինչ պես աջ կզոթը արգանդի մեջ շարժվում ե քուռակը:

Ծնելուց 2 շաբաթ առաջ պիտի սկսել ամեն գիշեր հակել զամբիկին, վորպեսզի ծնելիս մոտը մարդ լինի և ոգնի: Գոմի հատակը պետք ե հարթել: Պետք ե հայել, վոր պատերում, պատուհաններում և դռներում ձեղճեր չլինեն: Զամբիկի պայտերը պիտի քաշել և ուտեցնել ընտիր կեր:

Ծնելուց 2-3 որ առաջ զամբիկի ծծերից դուրս ե դալիս «խակ կաթի» կաթիլներ, այսինքն խեժ և հեղց ծծերի ծալին ել չորանում: Այդ բանը նկատելուց հետո ավելի հաճախ պիտի լինել զամբիկի մոտ, մանաժառնգ գիշերները, վորպեսզի ծնելիս անողնական չմնա:

ԽՆՁՊԵՍ՝ ՊԻՏԻ ՈՐՆԵԼ ԾՆԵԼԻՍ

Առողջ զամբիկի կանոնավոր ծնունդը տևում ե կես ժամ—մի ժամ և համարյա վոչ մի ողնության կարիք չի լինում:

Ծնելիս քուռակը դուրս ե դալիս հատուկ հեղուկով լիքը:

փուշիկի մեջ, Գանոնավոր դիրք լեղած դեպքում, սկզբում գուրս են գալիս քուռակի կամ առաջին յերկու վոտներն ու դուռնը և կամ լետեի յերկու վոտները: Ծննդի հենց սկզբից չպետք է փուշիկը պատուել և հեղուկը թափել, դրանից ծնունդը կդժվարանա: Պետք է սպասել, մինչև դուրս կգա քուռակի մեծ մասը:

Չամբիկին ծնելիս պետք է ողնի վոտքերից թեթևակի քաշելով, յերբ նա ուժ է տալիս, իսկ յերբ հանգստանում է, քաշել չի հարկավոր:

Յեթե ծնունդը մի ժամից ավելի յն տևում և քուռակն անկանոն դիրքով է գալիս, պետք է մարդ ուղարկել անասնաբուժին կանչելու:

ԶԱՄԲԻԿԻ ՈՒ ՔՈՒԱԿԻ ԽՆԱՄՔԸ ԾՆԵԼՈՒՅ ՀԵՏՈ

Քուռակը մոր արգանդում նրա հետ միացած է լինում պորտի միջոցով: Հենց պորտի միջոցով էլ նա իր կյանքի ու աճման համար ամեն ինչ ստանում է մորից պատրաստի: Ծննդից հետո յերբ մայրը կանգնում է՝ պորտը կտրվում է: Այդ վարկյանից նորածին քուռակը ինքը պետք է սկսի շնչել ու սրունդ վորոնել:

Զիարուծը պետք է նրան ողնի այդ գործում:

Վորպեսզի նորածին քուռակը կարողանա շնչել, մինչև վ պորտի կտրվելը պետք է պատուել նրա գլխի փուշիկը և լորձուքից մաքրել քթածակերը: Յեթե տերը նկատում է, զոր քուռակը շնչասպառ է լինում, չի կարողանում շունչ քաշել, պետք է բերանով դուրս ծծի նրա քթածակերի լորձուքը և այդպիսով փրկի նրան:

Ծննդից անմիջապես հետո զամբիկը սովորաբար լիզում է իր քուռակին և սկսում կեր ուտել: Տերն այդ ժամանակ պետք է մաքրի քուռակին և ծածկի թե նրան, թե մորը, վորպեսզի չմրսեն: Յեթե զամբիկը ծնելուց հետո կեր չի ուտում, դա վատ նշան է, նշանակում է առողջ չի, պետք է դիմել անասնաբուժին:

Համառությամբ ու համբերատարությամբ պիտի աշխատել, զոր քուռակը հենց քո ներկայությամբ ծծի մորը: Առաջին կաթը (խեժը) տաքացնում է նորածնին և ներգործում է վորպես լուծողական, ոգնում է ստամոքսը մաքրելուն: Նշանակում է յերբեք չի կարելի խեժը գետնի վրա կթել:

Այն փուշիկը, վորի մեջ լեզու է քուռակը, սովորաբար

ծնունդից կես ժամ, մի ժամ հետո դուրս է գալիս ու վայր ընկնում: Յեթե 2-3 ժամում զամբիկի ներսը չի մաքրվում, նամար խի բաժակի միջոցով լիզուի կամ կարբուլյան թթվուտի գուլ լուծուլթով պիտի մաքրել նրա ներսը (կարբուլյան թթվուտ պիտի վերցնել 1 մասին 100 մաս ջուր): Նամարխի բաժակը, լիզուլը և կարբուլյան թթվուտը վաճառում են դեղատներում:

Յերբ փուշիկն ընկնում է, պետք է թաղել հողի մեջ:

Յեթե քուռակի պորտը յերկար է կտրվել, արմատից մի ավել յերկարությամբ պիտի կապել թելով, կապի ցածից կտրել և ծայրն ալրել յողով:

Ծնունդի առաջին որը հետևի, վոր քուռակն անպայման արտաթորի առաջին կղկզանքը: Յեթե նկատում ես, զոր չի արտաթորում, պետք է նրա հետանցքը լվանալ գուլ սապոնայրով և հետին սրսկիչի կամ նամարխի բաժակի միջոցով: Յեթե այս վերջինները ունես, կարելի է լվանալ ցուցամատով, միայն թե չեղունգը կտրելուց և մաքրելուց հետո:

Չամբիկին ծնելուց հետո ջրել կարելի չի միայն 3 ժամ անց. այն էլ ամառվա տաքության ջրով: Վորպես կեր լավ է տալ մարգագետնի խոտ, մի մասը փոխարինելով յերբքնուկով, առվույտով (չոնջալով) կամ վիկի և վարսակի խառնուրդով: Առաջին յերկու շաբաթը լավ է վարսակի փոխարեն տալ թեփ և զամբիկին չաշխատեցնել:

ՈՒՒԱԿԻ ԽՆԱՄՔԸ

Ծծկեր քուռակը վորքան շուտ վարժվի վարսակին, այնքան լավ: Դրա համար էլ, հենց վոր քուռակն սկսի հետաքրքրվել վարսակով, մորը վարսակ տալիս կապիր, կամ քուռակին էլ հենց նրա մոտ տուր առանձին ծեծած, մանրած վարսակ: Այդ պիտի սկսել 200 գրամից և հասնել մինչև 1 կիլոգրամի:

Մի անհեթեթ կարծիք կա, թե քուռակին, մինչև 2 տարեկան դառնալը, վարսակ տալ չի կարելի: Դա ճիշտ չէ: Գիտությունն ու փորձը հակառակն են ապացուցում: Առանց վարսակի կերակրելով մենք կործանում ենք քուռակին: Քուռակի ապագան կախված է նրա լավ կերակրելուց:

Առաջին ամառը բացի մոր կաթից, լավ արոտից և մի քիչ վարսակից, քուռակին ուրիշ բան հարկավոր չէ: Հարկավոր է միայն նրա հետ լավ վարվել, սիրալիբ լինել, վորպեսզի նա մարդուն վարժվի, հավատա և սիրի:

Յերեք ամսականից, խիստ շոգերի ու յեռուն աշխատանքի ժամանակ պետք է քուռակին ասֆիմանաբար վառեցնել, վոր տանը մնա առանց մորը Սակայն այդ դեպքում պետք է լավ հակողութուն լինի, վորպեսզի քուռակը մոր կարոտից իրեն չվնասի: Համենայն դեպս 3 ժամից ավելի նրան առանց մորը թողնել չի կարելի. դա վատ կազդի թե քուռակի և թե մոր վրա:

Քուռակին խնամելիս հիշիր, վոր ձիու զարգացման ամենազլխավոր պայմաններից մեկը աղատութունն է: Ուստի աշխատիր, վոր քուռակներին, մանավանդ հավանութուն տվածներին. վորքան կարելի չե քիչ ժամանակ փակված պահես:

Վեց ամսական քուռակն արդեն լավ վարժվում է խոտին և հաճախ նուլնիակ ջրին: Այդ ժամանակ մոր կաթը նրա համար ավելորդ է դառնում և պետք է աստիճանաբար ծծից կտրել:

Այդ ժամանակ քուռակի որական կերը հետևյալը պիտի լինի. ա) շատ լավ մարգագետնային խոտ (վոչ ճահճային և վոչ անտառոտ վայրերում),

բ) 1½ կիլոգրամ մանրած կամ փայտի ամանում ծեծած վարսակ, մոտավորապես նույն քանակությամբ մանրած դադարով:

Յեթե քուռակն այդ կերը լավ է ուտում, շուտով պիտի կերն ավելացնել: Ծծից կտրելուց հետո սկզբնական շրջանում շուր պիտի տալ հաճախ:

Առաջին ձմեռվա սկզբում ծծից կտրած քուռակի կերի չափը մոտավորապես հետևյալը պիտի լինի.

ա) վարսակ և գաղար 2-ական կիլոգրամ յուրաքանչյուրից,

բ) ուղածին չափ լավ տեսակի մարգագետնի խոտ, վորքան կցանկանա: Ցանկալի չե խոտի մի մասը փոխարինել յերեքնուկով կամ վիկի և վարսակի խառնուրդով:


Այդ կերը պիտի բաժանել 3 մասի և տալ քուռակին զանազան ընդմիջումներով:

Յուրաքանչյուր անգամ կեր տալուց առաջ ուղածին չափ շուր պիտի տալ ամառվա տաքության աստիճանի:

Յեթե նկատում ես, վոր քուռակը վարսակը մաքուր ուտում է և դեռ կուշա չի, ավելացրու վարսակի չափը. կարելի չե ավելացնել մոտ 1½ կիլո վարսակ 2 ամսում:

Չմեղ քուռակին ամեն որ պիտի մաքրել մազի խողանալով, 2-3 ժամ ազատ արձակել, վարժեցնել սանձի և մաքուր պահել սմբակը:

Բարձր մսուրից կեր ուտելուց քուռակի մեջքը ծովում ե: Դրա համար ել քուռակի ախոռը ցածր պիտի շինել, այնպես վոր կեր ուտելիս նա կզանա: Մսուրը շարժական ճաղածածկ պիտի ունենա, վորպեսզի խոտը ցրվի չգա, իսկ վարսաի համար ծայրին մի առանձին տեղ պիտի լինի պատրաստված: Մսուրի վերին մասը ձիու ծունկերի բարձրության պիտի լինի (տես նկ. № 6):



Նկ. 6. Մսուր՝ բացվող ցանցաձև ծածկոցով, հացահատիկային կերերի բաժանմունքով և կապելու հարմարությամբ

ՁԻՈՒ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Ձիուն կանոնավոր կերարելու համար պետք է իմանալ.

ա) ինչքան կեր է հարկավոր գոյությունը պահպանելու համար (կենսապահ կեր),

բ) ինչքան կեր է հարկավոր աշխատանք կատարելու համար (արտադրական կեր):

Ձիուն վորպես կենսապահ կեր բավական է տալ որական 1 կիլոգրամ վարսակ, յուրաքանչյուր 120 կիլոգրամ կենդանի քաշին:

Բացի այդ, աշխատանք կատարելու համար պետք է տալ յուրաքանչյուր ժամ թեթև աշխատանքի համար 200 գր. վարսակ, յուրաքանչյուր ժամ միջակ աշխատանքի համար 400 գր. վարսակ, յուրաքանչյուր ժամ ծանր աշխատանքի համար 600 գր. վարսակ:

Ձին միայն վարսակով կերակրել չի կարելի: Դա զուտ է թե ձիուն և թե տիրոջ. Մոկորաբար անտեսութունում լինում են ուրիշ կերեր ևս: Դրա համար ել ձիապանը ճիշտ կերպով պիտի իմանա, թե մի կերը քանի անգամ է ուժեղ մյուսից:

22-58573

185581



Կերի ուժը չափելու համար մեկ կիլոգրամ վարսակը համարվում է «կեի միավոր»:

Մեկ կիլոգրամ վարսակին փոխարինելու համար հարկավոր են՝	
Մարգագետնի խոտ	2 1/2 կիլոգր.
Յարեքնուկի խոտ	2 »
Գարնանացանի դարման	3 1/2 »
Աշնանացանի դարման	5 1/2 »
Կարտոֆիլ	4 »
Գալար	7 »
Կորեկ, կանիփի քուսպ հնդկացորեն	1 »
Կտավատի սերմ	1/2 »

Գարի, հաճար, լոբինի, վիկ, սիսեռ, վոսպ, ցորեն, կտավատի քուսպ կամ արևածաղիկի՝ 8-10 գրամ:

Զիռն, վորպես կենսապահ կեր տրվում է զլխավորապես դարմանախառն կեր (խոտ, դարման, ծղոտ): Աշխատանք կատարելու համար տրվում է հատիկային կեր:

Զիռն որական կերի չափը պիտի վորոշել այսպես. լենթադրենք ձին կշռում է 480 կիլոգրամ և ամեն օր, որական 12 ժամ ծանր աշխատանք է կատարում:

Իբրև կենսապահ կեր նրան հարկավոր է լուրաքանչյուր 120 կիլոգրամ կենդանի քաշին 1 կիլոգրամ վարսակ, իսկ 480 կիլոգրամին՝ 4 անգամ ավելի, այսինքն՝ 4 կերի միավոր:

Մեկ ժամ ծանր աշխատանքի համար տրվում է 600 գր. վարսակ, 12 ժամին՝ 12 անգամ ավելի, այսինքն՝ 7 կիլոգրամ, 200 գրամ, կամ թե մի կերի միավորից մի քիչ ավելի:

4 կերի միավոր կենսապահ կերը կաբող ենք կազմել այսպես.	
Մարգագետնի խոտը 5 կիլոգրամ, կամ 2 կերի միավոր	
Վիկ	2 » 1 »
Վարսակի դարման 3 1/2 կիլոգր. կամ 1 »	

Ընդամենը 4 կերի միավոր

Աշխատանքի համար տրվելիք 7 կերի միավորը (արտադրական կեր) կարելի չէ կազմել այսպես՝

Վարսակ 3 կիլոգրամ, կամ մոտ	3 կերի միավոր
Կտավատի քուսպ 1 1/2 կգր. կամ մոտ 1 »	»
Կորեկի ալյուր (շաղ տված) 3 կլ. կամ մոտավորապես 3 կերի միավոր	

Ընդամենը՝ 7 կերի միավոր

Ձահել, դեռ ևս աճող կամ շատ նիհար բանող ձիու կերին պիտի ավելացնել որական ևս 1 կիլոգրամ կորեկային կեր:

Աշխատող հզի դամբիկին պետք է տալ միայն թաքմ կերեր և հզի ու թխն առաջին շրջանում նորմալից ավելի որական 1/2 կիլո, լեն. կրող կիսում որական 1 կիլո հատիկային կեր:

Քուսակամեր դամբիկին շորմալից ավելի պիտի տալ առաջին լեն. կերու առում որական չորկու կիլոգրամ հատիկային կեր:

Բաց յեթե նկատվի, վոր դամբիկը ելի նիհարում է, պետք է ավելացնել կերը. Բացի այդ, լեն. լավ արտատուղ չկա, պետք է տալ նաև գազար: Ավելի լավ է խոտի կեսը փոխարինել վիկով կամ առվույտով:

Արտադրող հովատակին բեղմնավորման լեռուն շրջանում որական պետք տալ 5-6 կիլոգրամ վարսակ, ուղածին չափ խոտ և որական առնվազն 1 ժամ զրոսանքի տանել:

Բանող ձիու որարածինը պիտի կազմել ինչ ան կարելի լեն. քաղմապիսի կլ. բերից, այնպես վոր նրա մեջ լինի և խոտ և հատիկային կերեր և զանազան տեսակի դարման: Արժատապառուղներին ձիու համար ամենալավը գազարն է: Գազարը պիտի տալ լվացված և կտրված: Կարտոֆիլը կարելի չէ տալ կամ լեն. փած և կամ մի. ամբողջ օր թրջելուց հետո: Մլած կարտոֆիլը՝ ծիլերը պետք է պղկել, նոր տալ ձիուն:

Մանր, դանդա աչալ աշխատանքի զեպքում և ծանրակշիռ տեսակի ձիերին տրվող վարսակի 2/3 մասը կարելի չէ փոխարինել ուրիշ, ավելի եծան հատիկային կերերով: Արագաքալ և վազելու աշխատանք կատարող ձիերի ու ժեղ կերը լավ է, վոր վարսակ լինի:

Ամեն տեսակի նոր կերերին ձիուն պիտի վարժեցնել աստիճանաբար, վորպեսզի ստամոքսի խանգարում չստանա: Փռած, փչացած կերեր ամենևին չպիտի տալ: Յե, ձիու համար կերարածին ևս կազմում, մի քանի օր հետևի, յեթե ձին ուտում է իր տակի փովածը (կամ ցածարը) և կրծում է մուրը, պետք է մի քիչ ավելացնել խոտը կամ գարնանացանի դարմանը: Յեթե նիհարում է, պետք ավելացնել հատիկային կերը:

Յեթե ձին չի աշխատում, կլ. ը պիտի տալ որական 4 անգամ: Ձմեռվա աշխատանքի օրերին՝ 2 անգամ. կեսօրին և գիշերը: Ամառվա աշխատանքի օրերին կեր պիտի տալ որական 3 անգամ:

Տաք ձիուն աշխատանքից հետո 2 ժամից շուտ չի կարելի տալ վոչ ջուր, վոչ վարսակ, ըստ վորում ջուրը պիտի տալ վարսակից առաջ:

Ձահել քուռակներին պիտի տալ մոտավորապես հետևյալ ուրական կերը. յերկրորդ ձմեռը ($1\frac{1}{2}$ տարեկանին) 3—4 կիլոգրամ վարսակ:

2 $\frac{1}{2}$ տարեկանին 4—5 կիլոգր. վարսակ:

Ծառակշիռ ցեղի քուռակներին պիտի տալ արմատապլուստը (լավ և գաղաղը): Արմատապլուստի քանակը մոտավորապես նույնն է, ինչ վր վարսակինը:

Խոտ պիտի տալ ուղածին չափ: Լավ և խոտի մի մասը փոխարինել լոբազգի բույսերով (չիբիքնուկ, վիկ, առվուշտ):

Ձին լավ կերով ապահովելու համար կերաբույսերի ցանք կատարեցե՛ք:

ՁԻՈՒ ԽՆԱՄՔԸ

Ձիու գոմը պիտի շինել այնպես, վոր ձմեռը նրա մեջ ջուրը չսառի, իսկ ամառը սառ լինի: Պատուհաններին պիտի և ապակի գցել: Գոմում այնքան լույս պիտի լինի, վոր կարելի լինի կարգալ: Պետք է խողովակ անցկացնել ողը մաքրելու համար: Ամեն ոք պետք է գոմի աղբը մաքրել և հատակին փովածք (կամ ցամքար) շաղ տալ:

Ձիու մարմինը պիտի մաքուր պահել: Դրա համար ձմեռը ձիուն պիտի մաքրել մազե խողանակով, իսկ խողանակը պետք է մաքուր պահել: Ամառը ամեն ոք ձիուն պիտի լողացնել ու լվանալ:

Ամեն ոք մաքրելիս հետևիք, վոր պոչի ու բաշի քոս չերևա, ինչպես և սմբակի վերևի հոդերի վրա (խողանակի): Այդ հիվանդությունը մի փոքր նույնիսկ նկատելիս՝ քսիք համապատասխան քանակությամբ տալը բաժինը լավ մազութի և նավթի խառնուրդով:

Ձին մաքրելիս չմոտանաս ամեն անգամ բարձրացնել բոլոր չորս վոտքերը և փայտի տաշիով մաքրել սմբակները:

Ձահել, չալատած ձիերին ձմեռվա մեջ 2 անգամ պիտի տանել անասնաբուժակի կամ լավ պալտարի մոտ, վոր կտրտի ավելորդ տնած սմբակները:

Այս գրքույկում բերված բոլոր խորհուրդները կատարելն այնքան էլ հեշտ է, բայց չափազանց անհրաժեշտ է: Դժվար է մանազանդ անհատ անտեսադիտող համար, վորոհետև նա ստիպված է միաժամանակ թե՛ ձին խնամել և թե՛ տնտեսության մյուս

աշխատանքները կատարել: Կոլեկտիվ տնտեսությունների ու ձիաբուծական ֆերմաների համար այս խորհուրդները կատարելն ավելի հեշտ է: Նրանք թե՛ նյութական հնարավորություններ ունենալու բոլոր խորհուրդները կատարելու համար և թե՛ կարող են հատուկ մարդկանց հանձնարարել ձիերի խնամքը:

Հարկավոր է միայն լավ կազմակերպել ու կանոնավոր հիմքերի վրա դնել աշխատանքը:

Հարկավոր է հիմնովին վերացնել դիմադրկությունը, այսինքն՝ վորոշ ձիերի խնամքը հանձնարարել վորոշ մարդկանց և նրանց ամբողջապես պատասխանատու դարձնել այդ գործի համար:

Հարկավոր է կազմակերպել ձիապահների սոցմրցում, փորձի փոխանակություն, խրախուսել լավ ձի պահողներին, պարգևատրել հարվածայիններին:

Այս ձևերով մենք կարող կլինենք կանոնավոր հիմքերի վրա դնել ձիաբուծությունը մեր լեզվում, բազմացնել ձիերի քանակը, վոր այնքան անհրաժեշտ է սոցիալիստական վերակառուցման յենթարկվող մեր գյուղատնտեսությանը և մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունն ամրացմանը:

ՁԻԵՐԻ ԹՎԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԱՃՅՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄ.Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համ.Կ(Բ)Կ Կենտկոմը և բարձրագույն Խորհրդային մարմինները բաղմիցս նշել են, վոր անհրաժեշտ է «վճռակ ն հալահարված տալ ձիու քաղող ուժի թերագնա ատման տեսչեցներին՝ կոլտնտեսական շարժման ներկա ետպուում» (Համ. Կ(Բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվ. 5-ի վորոշումը):

XVI Գոսսամադումարը բոլոր կուսկազմակերպությունների առաջ դրեց «դեպի ձին խնամքով վերաբերվելու և ձիաբուծական թեքումով հատուկ խորհրտնտեսություններ և ընկերություններ տալը» խնդիրը:

Չսպառնալով ցուցումներին, Կենտկոմն ստիպված է նշել, վոր շատ կոլտնտեսություններում, խորհրտնտեսություններում և քաղաքային ձեռնարկություններում դեռևս անհրաժեշտ չափով ուշադիր վերաբերմունք չի ստ ղված դեպի ձիերը և չի կարգավորված նրանց նորմալ վերաբարտադրությունը: Տեղական կազմակերպությունները գործնականում չեն կարողացել ապահովել կուս

սակցութեան ցուցումներն կատարուած ժողովրդական տնտեսութեան այդ կարեւորագույն ասպարիզում: Իրա հետեւումն այն ե լեզուն վեր Միութեան շատ հանրապետութիւններում, մարդերում ու յերկրամասերում պակասել է ձիւրի քանակը և վատացել է նրանց վերակը: Բոլորն պարզ է այդ յերեւոյթի փաստակար հետեւանքը և գլուխաւոր տնտեսութեան միջ, ուր ձիւն բացառիկ շշանակութիւն ունի, և արդէն արեւելեան միջ, ուր ձիւն տրանսպորտն զգալի տեղ է գրավում, և յերկրի պաշտպանութեան գործում, ուր հեծելազորը մնում է վերապահ մի հզոր զենք:

Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն մի անգամ ևս պնդում է, վոր աւելաժեշտ է իրագործել «տրակտորի համալրումը ձիւն հետ դաշտային աշխատանքներում» (Սորհուրդների V համագումարի վորոշումը) և առաջարկում է կուսակցական կազմակերպութեան ներքին՝ այնպէս անել, վոր բոլոր տնտեսական կազմակերպութիւնները համապատասխան վերաբերմունք ստեղծեն դեպի ձիւնը ու նրանց քանակը: Ինչպիսիք ձիւնը խնամքը, նրանց վորակի բարելավումը, կերպարման անհրաժեշտ ձևի կազմակերպումն ու վերաբարձրութիւնը նույնպիսի ուղղորդութեան պիտի դարձվի, ինչպիսի ուղղորդութեան դարձվում է ցանքի կամ պահանքի վրա:

Կենտկոմն առաջարկում է մարդկոյններին, յերկրային կոմիտեներին և ազգ. կոմիտեակցութիւններին Կենտկոմներին՝ սխտեմատիկաբար ղեկավարութեան լսել ձիւնի քանակի մասին և ժամանակին միջոցներ ձեռք առնել պահպանելու և դարգացնելու այն, ղեկավարվելով ՍՄ Ժողովրդների 1931 թվի դեկտեմբերի 7-ի և 1932 թ. մայիսի 27-ի վորոշումներով:

Կենտկոմը նախադրւելացնում է, վոր դեպի ձիւն անուղղորդ ու անփութ վերաբերմունք ցույց տալը, վորն հետեւեցով ձիւնի մասսայական վոչնչացում կառաջանա, կհամարվի հանցագործութիւն ժողովրդական տնտեսութեան հանգեպ և պիտի պատմվի որեւէ անգամ խստութեամբ:

27 մայիսի 1932 թ. Համ. Կ(բ) Կ Կենկոմ

ՁԻՆԵՐԻ ԳԱՆԱԿԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ ՅԵՎ ԺՈՂՈՐԴԱՆՈՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Չայած Սորհրդային Համամիութենական համագումարների վորոշումներին և չնայած կառավարութեան մի շարք վորոշումներին (ԽՍՀՄ ԺԿԽ 1931 թ. ապր. 2 վորոշումը, ԽՍՀՄ ԿԳԿ և

ԺԿԽ 1931 թ. դեկտ. 7 վորոշումը)՝ ժողովրդական տնտեսութեան մեջ ձիւն թերահատելու դեմ վճռակառ պայքար մղելու մասին, և չնայած ԽՍՀՄ Հոգեւորկոմատի կողմից ծավալած սխտեմատիկ պայքարին՝ ձիւնի խնամքի ու ոգտագործման դիմադրութեանը վերացնելու համար, այնուամենայնիվ շատ շրջաններում ու մարդերում (սանավանդ Ուկրաինայում, Բելոռուսիայում և Ուրալում) շարունակվում է ձիւնի անփութ, անխնամ ոգտագործումն ու անհիշատ շահագործումը, կերպարման չափով չապահովելու յերեւոյթը և ձիւնի չափից դուրս հործումը, նրանց ստեղծելու անթույլատրելի տոկոսը և անբավարար ուղղորդութեանը դեպի ձիւնի վերաբարձրութեան գործը:

Նպատակ ունենալով արատաւելի անել ժողովրդական տնտեսութեան համար նախ փաստակար յերեւոյթները և անհրաժեշտ բեկում ստեղծել յերկրում ձիւնի քանակի պահպանման ու ձիւնը ուղղութեան դարգացման գործում՝ ԽՍՀ Կենտրոնկոմն ու ժողովրդները վորոշում են.

1 ՁԻՆԵՐԻ ԳԱՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Բոլոր խորհրդային մարմինները, կոմիտեակցութեան ու խորհտնտեսական կազմակերպութիւնները, վորոնք ձիւնն ոգտագործում, գործկոմի նախագահների, կոլլարչութիւնների նախագահների և խորհտնտեսութիւնների դիրեկտորների պատասխանատւութեամբ պարտավոր են կարճ ժամանակամիջոցում հետեւել վորոշական միջոցառումներ ձեռնարկել՝ վերացնելու համար ղեկավարութեանն ու դեպի ձիւն չեղած հանցագործանուղղորդ վերաբերմունքը:

ա) Ձիւնի դրութեանը ու ոգտագործման պատասխանատւութեանն անհատորեն դնել խորհտնտեսութիւններում ու Մ.Տ. կայաններում դիրեկտորի տեղակալի վրա, կոմիտեակցութիւններում՝ վարչութեան տեղաւորից մեկի վրա, ձեռնարկութիւններում ու հիմնարկութիւններում այն անձի վրա, վոր վարում է տվյալ հիմնարկ-ձեռնարկութեան վարչատնտեսական աշխատանքը:

բ) Սանմանել ձիւնի աշխատանքի այնպիսի կայուն կարգ, վոր ապահովի ձիւնի ամենորոյա նորմալ հանգիստը և պարբերաբար աշխատանքից ազատումը՝ նրանց աշխատունակութեանը վերականգնելու համար:

Տեղական հողաւրին մարմինները, հաշվի առնելով տեղական առանձնահատուկութիւնները և յեւնեւոյ ավելի շրջանի միջին ձիւղ վորակից՝ պիտի նորմաներ մշակեն ձիւղ ալ: հիմնական աշխատանքների համար, վոր կատարվում է խրտնտեսութիւններում, կոլտնտեսութիւններում, ձեռնարկութիւններում ու հիմնարկութիւններում:

գ) Արգելի վոր է մեկին կարգադրութիւններ անել ձիւղ նկատմամբ, բացի կոլտնտեսութիւնում բրիգադին կցված բրիգադիւրից:

դ) Արգելի կոլվարչութիւններին՝ կոլեկտիվի ձին ձրիաբար ոգտագործելու տրապարելը վոր է մեկին, վոր է նպատակով, ում կողմից էլ վր լինի այդ պահանջը, թեկուզ և պահանջն տեղական իշխանութիւն մարմինները, վերադաս մարմինների լիազորները, միւրողները և ալ:

յ) Ձիւրի վա աշխատող աւձանց և ձիւղանների գործաքային աշխատանքը կիրառելիս աշխատավորձի չափը անմիջականորեն բոլից նեւ վոչ միայն արտադրանքի նորմաների կատարումից, ալ և ձիւղ առողջական վիճակից, նրա գիրութիւնից և ալ:

2. ԱՊԽ ին կից մթերման կոմիտեին պարտավորեցնել ըստ առանձին շրջանների ու կոլտնտեսութիւնների հացամթերման պլանները վորոշելիս հաշվի առնել նրանց ունեցած ձիւրի քանակը այնպես, վոր հացամթերումների վերջնական բաշխումը մարզերի ներսում, առանձին շրջանների միջև շրջանների ներսում և կոլտնտեսութիւնների միջև ապահովի շրջաններում, կոլտնտեսութիւններում հատկապի կերի այն նլազագւլն քանակի թողումը, վորն անհրաժեշտ է նրանց ձիւրին իրենց աշխատունակութիւնը պահպանել ու համար:

Պարտավորեցնել կոլտնտեսութիւններին, հացամթերումներից և սերմիւրի կազմելուց հետո ալիլի մնացած հատկային կերի բաշխման ժամանակ լիովին ապահովել կոլտնտեսութիւնների ձիւրի կերի պահանջը:

Հանձնարարել Միութենական և ավտոնոմ Հանրապետութիւնների ժողկոմխորհներին, Մարզ լերկրային Գործկոմներին՝ ըստ շրջանների սահմանել հատկապի կերի այն նվազագուլն նորմաները, վոր անհրաժեշտ է ձիւրն իրենց բանուկ վիճակում պահելու համար:

3. Արգելի ապահովագրական վճարումներ կատարել այդ

ձիւրի համար, վորոնք սատկել են վնասարարական կամ անտեսանալար վերաբերմունքի հետեան:

4. Հանձնարարել ԽՍՀՄ Գերագուլն դատարանի պլենումին, առաջիկա նիստում լսել Միութենական Հանրապետութիւնների Գերագուլն դատարանների գեկուցումներ այն մասին, թե նրանք ինչպես են պալքար մղել դեպի ձիւրը լեղած գազանալին ու անուշադիր վերաբերմունքի դեմ և կոնկրետ ցուցումներ տալ տեղերին:

Հանձնարարել ԽՍՀՄ Գերագուլն դատարանի դատախազին, ուժեղացնել դատախազական հսկուութիւնը բոլոր կազմակերպութիւնների նկատմամբ, վոր կատարեն Կուսակցութիւն ու կառավարութիւն վորոշումները ձիւրի պահպանման ու բարելաւգծ ոգտագործման մասին:

5. Նկատի ունենալով, վոր տեղի լին ունեցել ապորինի կերպով աշխ-փոխար-պարհակի հայտարարման բազմաթիվ դեպքեր և այդ պարհակները անց են կացվել անտնտեսալար ձեւերով, վորի հետեանքով ձիւրի մասսայական փչացման դեպքեր են լեղել:

ա) Միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների Գնտագործկոմներին ու ժողկոմխորհներին, լերկրային, մարզային և շրջանային գործկոմներին արգելի աշխ. փոխ. պարհակ հայտարարելը, առանց լուրաքանլուր առանձին դպրի համար Միութենական ժողկոմխորհից հատուկ թուլատվութիւն ստանալու:

բ) Աշխ-փոխ-պարհակ անցկացնելիս լստորեն պահպանել ձիւրի ոգտագործման կանոնները, այդ ձիւրի բարձման նորմաները, աշխատանքի տեղութիւն չափը, ձիւրին կերով ապահովելու խնդրը և կատարած աշխատանքը ժամանակին վարձարելու հարցը: Հանձնարարել Միութենական ու Ավտոնոմ Հանրապետութիւնների ժողկոմխորհներին՝ սրա համաձայն որենսդրական կարգով կանոններ սահմանել այն ձիւրի բգտագործման մասին, վորոնք լսնթարկված են աշխ-փոխ. պարհակի:

6. Արգելի ծանր աշխատանքներում ոգտագործել 3 տարեկանից պակաս ձիւրին, հղի ձիւրին, ծնելուց 1 ամիս առաջ, ինչպես և ցեղական ձիւրին:

7. Պարտավորեցնել Միութենական ու Ավտոնոմ Հանրապետութիւնների ժողկոմխորհներին, լերկրային, մարզային և շրջանային Գործկոմներին՝

Տեղական հողալիւն մարմիններ, և, հաշվի առնելով տեղական տաճանահատկութիւնները և լինելով ավել շրջանի միջին ձիւղ վերակից՝ պիտի նորմաներ մշակեն ձիւղ այլ հիմնական աշխատանքների համար, վոր կատարվում է իւր տնտեսութիւններում, կոլտնտեսութիւններում, ձեռնարկութիւններում ու հիմնարկութիւններում:

գ) Արգելել վորն է մեկին կարգադրութիւններ անել ձիւղ նկատմամբ, բացի կոլտնտեսութիւնում բրիգադին կցված բրիգադիւրից:

դ) Արգելել կովաբնութիւններին՝ կոլեկտիվի ձին ձրիաբար ոգտագործելու տրամադրելը վորն է մեկին, վորն է նպատակով, ում կողմից ել վոր լինի այդ պահանջը, թեկուզ և պահանջն տեղական իշխանութիւն մարմինները, վերադաս մարմինների լիազորները, միւրդները և այլն:

ե) Ձիւրի վրա աշխատող անձանց և ձիւղապահների գործադրելն աշխատանքը կիրառելիս աշխատավարձի չափը անմիջականորեն բոլի ցնել վոչ միայն արտադրանքի նորմաների կատարումից, ալ և ձիւղ տողշական վրձակից, նրա գիրութիւնից և այլն:

2. ԱՊՊ ին կից մթերման կոմիտեյին պարտավորեցնել ըստ առանձին շրջանների ու կոլտնտեսութիւնների հացամթերման պլանները վորոշելիս հաշվի առնել նրանց ունեցած ձիւրի քանակը այնպես, վոր հացամթերումների վերջնական բաշխումը մարզերի ներսում, առանձին շրջանների միջև շրջանների ներսում և կոլտնտեսութիւնների միջև ապահովի շրջաններում, կոլտնտեսութիւններում հատիկային կերի այն նվազագույն քանակի թոյնում, վորն անհրաժեշտ է նրանց ձիւրին՝ իրենց աշխատունակութիւնը պահպանելու համար:

